ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 55(1), 2021 ***Геология и география***

Աշխարհագրություն

УДК 910.2

ԵՊՀ «ՍԵՐՎԻՍ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԵՌԱՎԱՐ ԲԱՂԱԴՐԻՉՆ ՈՒ ԴՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Տ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ [1*], Լ. Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ [2**], Ի. Վ. ՍԱՀԱԿՅԱՆ [1***],
Ն. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ [1****]

[1] *ԵՊՀ սերվիսի ամբիոն, Հայաստան*
[2] *ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան*

Աշխատանքում փորձ է կատարվել համակարգված կերպով վերլուծել «Սերվիս» մասնագիտության ուսումնական պրակտիկայի հեռավար բաղադրիչի կազմակերպչական, տեխանիկական, բովանդակային և մեթոդաբանական ասպեկտները: Ներկայացվում են հեռավար ձևաչափով ուսումնական պրակտիկայի հիմնական նպատակները, ուղղությունները, իրականացման ընթացքն ու ամփոփումը: Հատուկ ուշադրություն է դարձվում, մասնավորապես, առկա ուսումնական պրակտիկայի շրջանակներում հեռավար բաղադրիչի՝ որպես օժանդակ «գործիքի» կամ միջոցի ներառմանն ու հնարավոր դերակատարությանը:

https://doi.org/10.46991/PYSU:C/2021.55.1.031

Keywords: learning practice, distance learning practice, “Service”.

Ներածություն: «Սերվիս» մասնագիտությամբ ուսուցումը ԵՊՀ-ում սկիզբ է առել 2008–2009 ուսումնական տարում՝ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում. ներկայում մասնագիտությունը սպասարկվում է ֆակուլտետի սերվիսի ամբիոնի կողմից: Ուսումնական գործընթացի անբաժանելի մասն են կազմում ուսումնական պրակտիկաները, որոնց ժամանակ տեսական դասընթացներից ստացված գիտելիքները զուգակցվում են գործնական մասնագիտական կարողություններով և հմտություններով: Ըստ այդմ, բանիմաց և հմուտ մասնագետների պատրաստման կարևոր նախապայմաններից է ուսումնական պրակտիկայի մանրակրկիտ նախապատրաստումն ու կազմակերպումը:

2019–2020 ուսումնական տարում՝ COVID-19 համավարակի պայմաններում ՀՀ բուհերում ուսումնական գործընթացի հեռավար անցկացման համատեքստում առաջ եկավ ուսումնական պրակտիկան ևս հեռավար ձևաչափով անցկացնելու անհրաժեշտությունը:

* E-mail: tigran.sargsyan@ysu.am
** E-mail: hakobyan.lusine@ysu.am
*** E-mail: yeganyanirinaarmen@ysu.am
**** E-mail: n.hovhannisyan@ysu.am

Տվյալ հոդվածում ներկայացվում են հեռավար ձևաչափով ուսումնական պրակտիկայի անցկացման մեթոդական, կազմակերպչական և բովանդակային հարցերն ու առաձնահատկությունները (մասնավորապես, «Սերվիս» մասնագիտության բակալավրիատի 2-րդ կուրսի օրինակով)՝ հատուկ ուշադրություն դարձնելով առկա պրակտիկայի շրջանակներում դրա առանձին տարրերի ներառման հարցերին ու դերակատարությանը:

Հետազոտության հիմնական արդյունքները:

«Սերվիս» մասնագիտության ուսումնական պրակտիկայի հեռավար բաղադրիչի բովանդակությունն ու կազմակերպման առանձնահատկությունները: Ուսումնական պլանի համաձայն, պրակտիկան կազմակերպվում է «Սերվիս» մասնագիտության բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսերում: Եթե 1-ին կուրսում պրակտիկայի հիմնական նպատակն ուսանողներին ՀՀ զբոսաշրջային հիմնական երթուղիներին, դեստինացիաներին ու որոշ սպասարկման օբյեկտներին ծանոթացնելն է, հետաքրքրության և ճանաչողական գործունեության խթանումը, ապա 2-րդ կուրսում խորությամբ ուսումնասիրվում են ծառայությունների տարբեր տեսակների (հյուրանոցային, զբոսաշրջային-գործակալական, ռեստորանային, առևտրային, մշակութային) կազմակերպումը, «ներքին խոհանոցի» առանձնահատկություններն ու անհրաժեշտ կոմպետենցիաները՝ համապատասխան կազմակերպություններ այցելելու և գործունեությանը ծանոթանալու միջոցով: Ոլորտի՝ արդեն փորձառու մասնագետների հետ շփումը կարող է վճռորոշ դեր խաղալ ապագա նեղ մասնագիտական կողմնորոշման առումով: Կազմակերպվում է նաև Երևան–Գառնի–Գեղարդ–Երևան երթուղին:

Չվիճարկելով առկա՝ «ավանդական» ձևաչափով ուսումնական պրակտիկայի կազմակերպման բացարձակ առաջնահերթությունը, առաջարկում ենք դրա կազմում ներառել նաև հեռավար բաղադրիչ՝ բացառապես որպես հավելյալ կամ օժանդակ «գործիք», պրակտիկ գործունեության տեսակ:

Ըստ այդմ, կարելի է առանձնացնել ուսումնական պրակտիկայի շրջանակներում հեռավար ձևաչափով իրականացվող աշխատանքների 5 հիմնական նպատակ.

1. տեսական գիտելիքների ամրապնդում, դրանք գործնականում կիրառելու հնարավորությունների վերհանում և համապատասխան հմտությունների ձևավորում;
2. առցանց հարթակներում ինքնուրույն հետազոտություններ իրականացնելու ու դրանց արդյունքներն ամփոփելու կարողությունների զարգացում;
3. առցանց հարթակներում արդյունավետ մասնագիտական հաղորդակցության կարողությունների ձևավորում;
4. նպատակային հարցադրումներ կատարելու տեխնիկայի ձևավորում;
5. տարաբնույթ սերվիսային ձեռնարկությունների աշխատանքային գործիքակազմի, ոլորտային խնդիրների բացահայտում (մասնավորապես, 2-րդ կուրսում):

Նշվածներից 1-ինը կարելի է բնորոշել որպես ուսումնական պրակտիկայի գերակա նպատակ (հավասարապես կարևոր է նաև հեռավար բաղադրիչի

պարագայում): 2-րդն ու 3-րդն առավելապես բնորոշ են հեռավար ուսումնական պրակտիկային, իսկ 4-րդը և 5-րդը հավասարապես կիրառելի են ինչպես առկա պրակտիկայի, այնպես էլ հեռավար բաղադրիչի պայմաններում:

2019–2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում «Սերվիս» մասնագիտության 2-րդ կուրսի հեռավար ուսումնական պրակտիկան ներառել է Երևան քաղաքում գտնվող 4 զբոսաշրջային գործակալություն, 3 հյուրանոց (որոնցից 2-ը՝ միջազգային ցանցային) և 2 թանգարան: Հեռավար ուղևորության ձևաչափով ներկայացվել է Երևան–Գառնի–Գեղարդ–Երևան երթուղին՝ սերվիսագիտական, զբոսաշրջագիտական և աշխարհագրական (մասնավորապես, սերվիսի աշխարհագրության) տեսանկյուններից:

Որպես վիրտուալ շփման միջոց, կիրառելի է տեսահանդիպումների կազմակերպման ցանկացած հարթակ: Կուրսը բաժանվում է 3–4 խմբի, յուրաքանչյուր ղեկավար իր խմբին տրամադրում է հեռավար հանդիպումների հղումները: Սերվիսային ձեռնարկության աշխատակիցն, ըստ սահմանված ժամանակացույցի, միանում է հեռավար հանդիպումներին՝ համապատասխան խմբի և ղեկավարի հետ միասին: Հանդիպման 1-ին հատվածում աշխատակիցը ներկայացնում է ձեռնարկությունը, գործունեության բնույթն ու ուղղությունները, կիրառվող հիմնական սպասարկման մոտեցումները, կորպորատիվ քաղաքականության, մասնագիտական էթիկայի, մարքեթինգային ուշագրավ մոտեցումները: 2-րդ հատվածում ուսանողներն աշխատակցին ուղղում են հետաքրքրող մասնագիտական հարցերը:

Ամփոփելով ամբողջությամբ հեռավար ձևաչափով իրականացված ուսումնական պրակտիկայի ընթացքն ու արդյունքները, առաջարկում ենք առկա (ավանդական) ուսումնական պրակտիկայի հեռավար բաղադրիչում ներառել աշխատանքների հետևյալ ուղղությունները.

1. *արտասահմանյան վիրտուալ տուր-ուղևորություններ*: Ի լրումն առկա դաշտային երթուղիների և այցելությունների, վիրտուալ տուրերի միջոցով հնարավոր է «այցելել» նաև տվյալ պահին «անհասանելի» օբյեկտներ (օրինակ, ՀՀ-ից դուրս գտնվող աշխարհահռչակ թանգարաններ): Իսկ Google Maps կամ Google Earth ծրագրերի 3D (եռաչափ ծավալային) գործիքների կիրառմամբ կարելի է վիրտուալ շրջագայություններ կատարել առավել հայտնի զբոսաշրջային դեստինացիաներում՝ ծանոթանալ ճարտարապետական ու հատակագծային առանձնահատկություններին, սպասարկման օբյեկտների, ենթակառուցվածքների տեղաբաշխմանը, կատարել համեմատություններ և վերլուծություններ:

2. *Հեռավար միացումներ՝ տեղի սերվիսային ձեռնարկություններ*: Սա արդյունավետ կարող է լինել այն պարագայում, երբ պիկային՝ առավելագույն սեզոնային ծանրաբեռնվածության փուլում («High Season») առանձին սերվիսային ձեռնարկություններ ֆիզիկապես ի զորու չեն լինի ընդունելու պրակտիկանտներին:

3. *Համակցված այցելություններ*: Կարող են արդյունավետ լինել ֆրանչայզինգով աշխատող հյուրանոցների և այլ ծառայություններ մատուցող ցանցային ընկերությունների արտերկրյա կամ հայաստանյան մասնաճյուղերի աշխատանքներին ծանոթանալու առումով: Օրինակ՝ «Tufenkian Heritage Hotels» հյուրանոցային ցանցը ներկայացնելիս, գտվելով երևանյան հյուրանոցում, կարելի է հեռավար կապ հաստատել Գեղարքունիքի մարզի «Ավան

Մարագ Ծափաթաղ» հյուրանոցի, Տավուշի մարզի «Թուֆենկյան Հին Դիլիջան» համալիրի և Լոռու մարզի «Ավան Ձորագետ» հյուրանոցի հետ և վերլուծել աշխատանքային պայմանների ու գործունեության առանձնահատկությունները:

4. *Նախնական առցանց հետազոտություններ*: Սրանք կարևոր դեր են խաղում ինչպես առկա, այնպես էլ հեռավար ուսումնական պրակտիկայի արդյունավետության և ակտիվ մասնակցային բնույթի ապահովման առումով: Առցանց ռեսուրսների ուսումնասիրման միջոցով ուսանողները նախնական տեղեկատվություն են հավաքում պրակտիկայի օբյեկտների վերաբերյալ, ինչը թույլ է տալիս լինել առավել պատրաստված և նպատակային հարցադրումներ կատարել:

5. *Ընթացիկ առցանց ամփոփումներ*: Ղեկավարների կողմից մշակվում են Google հարցաթերթեր, որոնց միջոցով ուսանողներն ամփոփում են նախորդ հանդիպումներից (ինչպես առկա, այնպես էլ հեռավար) ստացված տեղեկություններն ու տպավորությունները: Google հարցաթերթը կարող է պարունակել ուսումնական գործընթացներում հաճախակի կիրառվող ԳՈՒՍ («Գիտեի», «Ուզում էի իմանալ», «Սովորեցի») և T-աձև աղյուսակներ:

Ըստ էության, հեռավար ձևաչափով ուսումնական պրակտիկայի պարագայում առաջ եկող կազմակերպչա-բովանդակային հիմնական խնդիրն է՝ իրականացման ձևի փոփոխության պարագայում պրակտիկայի նպատակների, վերջնարդյունքների, բովանդակային կողմերի ու արդյունավետության առավելագույն ապահովումը: Հետևաբար, պետք է ուշադրություն դարձնել հեռավար ուսումնական գործընթացի կազմակերպման տեխնիկական ու սոցիալ-հոգեբանական բնույթի այնպիսի առանձնահատկություններին, ինչպիսիք են որակյալ կապի, համապատասխան տեխնիկական միջոցների, հեռավար ուսուցման հարթակների և գործիքների արդյունավետ կիրառման, առցանց ուսումնասիրություն կատարելու կարողությունների պարտադիր առկայությունը, սկզբնական շրջանում՝ ուսումնական պրակտիկան հեռավար կերպով կազմակերպելու անսովորությունը, ոչ անմիջական ներկայությունն ու դրանից բխող սահմանափակումները, տեսախցիկի առաջ արտահայտվելու հնարավոր բարդույթավորումը և այլն:

Հարկ է նշել, որ արդի աշխարհում հաջողակ և կայացած մարդ ու մասնագետ դառնալու կարևոր գրավականներից է EQ (էմոցիոնալ ինտելեկտի հետ կապված հմտությունները) առավելագույն օգտագործումը, քանզի հաջողության են հասնում նրանք, ում հաջողվում է միավորել ռացիոնալ մտածողությունն ու էմոցիոնալ ռեակցիաները: Անձի էմոցիոնալ կոմպետենցիաների զարգացմանն ուղղված ջանքերը զգալի դրական ազդեցություն են ունենում կյանքի որակի և աշխատունակության բարձրացման վրա [1]: Ըստ այդմ, սերվիսի ապագա մասնագետների համար կարևոր են որոշումների ընդունման, ժամանակի արդյունավետ օգտագործման, մասնագիտական վերլուծություններ կատարելու և դրանց արդյունքները ներկայացնելու հմտությունները, միջանձնային շփումները. նաև այնպիսի որակներ, ինչպիսիք են սթրեսակայունությունը և էմոցիաների կառավարումը, պատասխանատվությունը, ճկունությունը, վստահությունը և այլն: Վերը նշվածների ձևավորման գործում մեծ է ինչպես «ավանդական»՝ առկա, այնպես էլ հեռավար պրակտիկայի դերակատարությունը:

Ի վերջո, ուսումնական պրակտիկան ու դրա հեռավար բաղադրիչը կարելի է քննարկել «Սերվիս» մասնագիտության առանձնահատկությունների դաշտում՝ մասնավորապես, պրակտիկան դիտարկելով որպես ծառայության յուրօրինակ տեսակ: Յուրաքանչյուր ծառայության մատուցման պարագայում կարևոր են հարաբերություններն ու շփումը, գործընթացի ուղղորդումն ու կոորդինացումը, և վերջապես, ընկալումը: Անշուշտ, առկա պրակտիկան առավել արդյունավետ է բուն սերվիսային ձեռնարկություններում շփման և ակտիվ ճանաչողության առումով, ինչն, իր հերթին, արդյունավետ ու խորն ընկալման կարևոր գրավական է: Հեռավար ձևաչափը կարող է արդյունավետ լինել նախապատրաստական կազմակերպչական աշխատանք-փոխհարաբերությունների, մասամբ՝ նաև պրակտիկայի ընթացքի ուղղորդման և համակարգման առումով:

***Ուսումնական պրակտիկայի հեռավար բաղադրիչի անցկացման փուլերը և արդյունքների ամփոփումը*:** Առհասարակ, «Սերվիս» մասնագիտության ուսումնական պրակտիկաների ծրագրումը և կազմակերպումը, ժամանակային առումով, ենթադրում է կազմակերպչական մի շարք քայլեր, որոնք միավորվում են ուսումնական պրակտիկայի կազմակերպման 3 հիմնական փուլերում՝ նախապատրաստման, իրագործման, ավարտման: Դրանց միջև առկա են գծային ու հաջորդական բնույթ կրող փոխհարաբերություններ և առնչություններ [2]:

Վերը նշվածը հաշվի առնելով, ուսումնական պրակտիկայի հեռավար բաղադրիչի կազմում կարելի է առանձնացնել հետևյալ 3 փուլերը՝ նախապատրաստական-կամերալ, բուն ընթացք (իրականացում) և ամփոփում:

Նախապատրաստական-կամերալ փուլում ղեկավարների ու համակարգողի կողմից իրականացվում են մի շարք կազմակերպչական աշխատանքներ, մասնավորապես.

- ուսանողների կոնտակտային տվյալների հավաք;
- սերվիսային ձեռնարկությունների հետ պայմանավորվածությունների ձեռքբերում և հեռավար միացումների ժամանակացույցի կազմում;
- տեսահանդիպումների կազմակերպման հարթակների փորձաքննություն;
- սերվիսային ձեռնարկությունների ներկայացուցիչների ելույթների թեմատիկ կառուցվածքի և թիրախային կետերի մշակում և հստակեցում:

Բուն ընթացքի փուլի մեկնարկը պրակտիկայի ընդհանուր հեռավար ժողովն է, որի ընթացքում ուսանողներին ներկայացվում են ուսումնական պրակտիկայի (ընդհանրապես), և դրա հեռավար բաղադրիչի նպատակը, կազմակերպչական և կարգապահական պահանջներն ու էթիկական նորմերը, հաշվետվությունների կազմման ու ներկայացման կարգը:

Հաջորդող օրերին, ըստ մշակված ժամանակացույցի և նախորդ կետում նկարագրված տեխնիկական ու կազմակերպչական լուծումների, իրականացվում են ուսումնական պրակտիկայի հեռավար բաղադրիչով նախատեսված աշխատանքները

Ամփոփման փուլում ուսանողները վերջնական տեսքի են բերում և ներկայացնում պրակտիկայի անհատական հաշվետվությունները: Վերջինս ունիվերսալ բնույթ է կրում՝ ամփոփելով նաև հեռավար կերպով իրականացված աշխատանքների արդյունքները: Այն բաղկացած է հետևյալ մասերից.

ա) տիտղոսաթերթ՝ ըստ ընդունված ձևաչափի;

բ) ներածություն՝ ներկայացվում է ընդհանուր տեղեկատվություն պրակտիկայի վերաբերյալ՝ նպատակները, այցելության օբյեկտներն ու երթուղիները, ժամանակացույցը;

գ) բուն արդյունքները՝ յուրաքանչյուր օբյեկտի համար նշվում են այցելության ամսաթիվը և հերթական համարը, օբյեկտի անվանումը, փաստացի հասցեն, կոնտակտային տվյալները, ներկայացնող աշխատակցի անունը, ազգանունն ու պաշտոնը:

Այնուհետև, համակարգված կերպով, ներկայացվում է բովանդակային նյութը, որը.

- տրվել է ղեկավարի կողմից, և/կամ՝
- ներկայացվել է այցելության տվյալ օբյեկտի աշխատակցի կողմից, և/կամ՝
- ուսանողը հայթայթել է տարբեր աղբյուրների վերլուծությամբ:
- ամփոփում և ներառում է ուսանողի ինքնուրույն արված ու հիմնավորված դատողությունները և վերլուծությունները (այդ թվում՝ SWOT ձևաչափով):

Բացի այդ, յուրաքանչյուր հաստատության համար ուսանողը հաշվետվությանը կցում է սեփական դիտարկման արդյունքները (աղյ. 1 և 2): Դրանցում, ըստ սահմանված հարցերի, ուսանողը շարադրում է իր եզրահանգումները և կատարում գնահատում՝ 1–10 միավորանոց սանդղակով.

ե. եզրակացություններ՝ 1–2 էջի սահմաններում:

զ. օգտագործված աղբյուրների ցանկ:

Աղյուսակ 1

Դիտարկումների ամփոփագիր, զբոսաշրջային գործակալություններ

Ուսանողի Ա.Ա.Հ. ---------- Զբոսաշրջային գործակալության անվանումը ---------- Ամսաթիվ ----------		
№	*Դիտարկվող հարցերը և ուսանողի եզրահանգումները*	1–10
1	Տեղադիրքը՝ մատչելիությունը, դիրքի ուժեղ և թույլ կողմերը	
2	Անձնակազմի մասնագիտական հմտությունները՝ խոսքի և շփման մշակույթը, այցելուների ընդունելությունը, աշխատանքի կազմակերպվածությունը	
3	Առաջխաղացման մոտեցումները՝ PR-ը և գովազդը, համագործակցությունն այլ ընկերությունների հետ, նորամուծություններ, սեփական յուրօրինակ և եզակի գրավչությունները	
4	Առաջարկվող զբոսաշրջային պրոդուկտի բազմազանությունը, գրավչությունը	
	Առաջարկություններ	

Անդրադառնալով դաշտային երթուղուն, պետք է նշել, որ 2020 թ. ամառային պրակտիկայի ընթացքում դրա հեռավար կազմակերպումը բացառապես պայմանավորված էր առկա երթուղու իրականացման օբյեկտիվ անհնարինությամբ: Հետագայում առկա ուսումնական պրակտիկայի շրջանակներում հեռավար երթուղիները կամ պետք է լրացնեն կազմակերպվող ավտոբուսային երթուղիներին (օրինակ, նախորդեն դրանց՝ որպես նախապատրաստական պրակտիկ գործունեություն), կամ ներառեն հայաստանյան

ու արտասահմանյան բացառապես այնպիսի դեստինացիաներ, որոնց առկա այցելությունը տվյալ պահին տեխնիկապես հնարավոր չէ:

Աղյուսակ 2

Դիտարկումների ամփոփագիր, հյուրանոցներ

Ուսանողի Ա.Ա.Հ. ---------- Հյուրանոցի անվանումը ---------- Ամսաթիվ ----------		
№	*Դիտարկվողհարցերը և ուսանողիեզրահանգումները*	1–10
1	Տեղադիրքը՝ մատչելիությունը, դիրքի ուժեղ և թույլ կողմերը, շրջակա օբյեկտները, հարակից տարածքն ու դրա բարեկարգվածությունը, միջավայրի գեղագիտական ասպեկտները	
2	Անձնակազմի մասնագիտական հմտությունները՝ խոսքի և շփման մշակույթը, այցելուների ընդունելության կազմակերպումը	
3	Առաջխաղացման մոտեցումները՝ PR-ը և գովազդը	
4	Ըստ հնարավորության՝ ինտերյերի ձևավորումն ու հարդարանքը, կահավորանքը, հարմարավետությունը և այլն	
5	Արտաքին տեսքի՝ էքստերյերի ձևավորումը, ճարտարապետական, դիզայներական լուծումները	
6	Սպասարկման կորպորատիվ հայեցակարգեր, սեփական յուրօրինակ և գրավիչ մոտեցումներ	
	Առաջարկություններ	

Ներկայացնենք դաշտային երթուղիների հեռավար կազմակերպման ու ամփոփման տարբերակ՝ Երևան–Գառնի–Գեղարդ–Երևան երթուղու օրինակով: Ղեկավարի կողմից երթուղու ներկայացումը հնարավոր է Google Maps ծրագրի կիրառությամբ՝ սեփական էկրանն ուսանողների հետ «կիսելու» պարագայում: Ծրագրում, որպես սկզբնակետ նշվում է ԵՊՀ-ն, իսկ վերջնակետ՝ Գեղարդի վանքը (տես նկար):



Երևան–Գառնի–Գեղարդ երթուղին ըստ Google Maps ծրագրի: www.maps.google.com

Ըստ գծագրված երթուղու, մեծացնելով կամ փոքրացնելով քարտեզի մասշտաբն ու կիրառելով եռաչափ ցուցադրության «գործիքներ», ղեկավարը ներկայացնում է երթուղու կիլոմետրային հեռավորությունը, հարևանությամբ առկա բնական և պատմամշակութային օբյեկտները, բնակավայրերը, մարզային սահմանները, սերվիսային ենթակառուցվածքի տարրերը և այլն: Երևան քաղաքի սահմաններում ներկայացվում են երթուղին ներառող վարչական շրջանները, հիմնական մայրուղիները, կից սերվիսային օբյեկտները և այլն:

Գառնու հեթանոսական տաճարի և Գեղարդի վանական համալիրի թվային նկարները ցուցադրելով, ըստ անհրաժեշտության՝ մեծացնելով, ղեկավարը ներկայացնում է ճարտարապետական հիմնական տարրերը, լուծումները, դրանց առանձնահատկությունները:

Ինչպես և սերվիսային ձեռնարկությունների պարագայում, հաշվետվության մեջ նշվում է երթուղու ամսաթիվը, հերթական համարը և ուղղությունը: Որպես երթուղու վերաբերյալ տեղեկատվության ամփոփման մոտեցում, առաջարկվում է «Սերվիսի աշխարհագրություն» դասընթացի պրակտիկայի երթուղիների ներկայացման՝ մեր կողմից մշակված մեթոդիկան: Ըստ այդմ, ուսանողն իր հաշվետվության մեջ ներկայացնում է երթուղու բնութագիրը (ուղղություն, տևողություն, կանգառներ, հարակից օբյեկտներ), Կոտայքի մարզի սպասարկման ոլորտի ընդհանուր աշխարհագրական բնութագիրը (ընդհանուր տեղեկություններ մարզի տարածքի բնակչության, համայնքների վերաբերյալ, մարզում ծառայությունների ընդհանուր արժեքը-ծավալը և առանձին տեսակների մասնաբաժինը, խոշորագույն սպասարկման կենտրոն բնակավայրերը և այլն), կանգառների մանրամասն բնութագիրը [3]: Կանգառների պարագայում (Զարենցի կամար, Գառնու հեթանոսական տաճար, Գեղարդի վանք) ներկայացվում են տեղադիրքը, կառուցման պատմությունը, պատմամշակութային արժեքը, ճարտարապետական առանձնահատկություններն ու լուծումները, այլ փաստեր:

Եզրակացություն: Կազմակերպելով հեռավար պրակտիկան ըստ վերը ներկայացված բովանդակության և կազմակերպչա-մեթոդաբանական մոտեցումների, պետք է արձանագրել, որ, չնայած տեղ գտած օբյեկտիվ դժվարություններին, պրակտիկայի ընթացքում լրացված Google հարցաթերթերի և ներկայացրած հաշվետվությունների վերլուծության արդյունքներով ապացուցվում է պրակտիկայի նախանշված նպատակների պատշաճ իրականացումը: Սակայն, ի տարբերություն ավանդական ուսումնական պրակտիկայի, կենդանի շփման պակասը, ներգրավվելու և սեփական աչքերով տեսնելու հնարավորության սահմանափակումն օբյեկտիվորեն հանդիսանում են հեռավար պրակտիկայի ամենաբացասական կողմը, որն, ըստ էության, շտկման ենթակա չէ:

Այդ իսկ պատճառով առավել նպատակային է հեռավար պրակտիկայի ներառումն առկայի կազմում՝ բացառապես առանձին բաղադրիչի և լրացնող-օժանդակ «գործիքի» կարգավիճակով: Նախատեսված լինելով արտակարգ դրության պայմաններում ուսումնական գործընթացի շարունակականության ապահովման համար, հեռավար ձևաչափով ուսումնական պրակտիկան որոշակի դերակատարություն կարող է ունենալ նաև ուսումնական բնականոն

գործընթացի պայմաններում՝ նպաստելով ուսանողների կողմից մասնագիտական առցանց հաղորդակցության և հետազոտական հմտությունների զարգացմանը, փոխլրացնելով ավանդական պրակտիկային՝ մասամբ ավելացնելով նաև դրա հնարավորությունները:

Ստացվել է՝ 29.09.2020
Գրախոսվել է՝ 13.11.2020
Հաստատվել է՝ 02.02.2021

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бредберри Т. *Эмоциональный интеллект 2.0.* М., ред: Манн, Иванов и Фербер (2017), 208 с.
2. Գրիգորյան Մ.Ա., Սուվարյան Ս.Ռ., Այեքսանյան Գ.Փ., Քելյան Ս.Ս. *Սերվիս մասնագիտության ուսումնական պրակտիկաների կազմակերպման ուսումնամեթոդական ուղեցույց:* Եր., ԵՊՀ հրատ. (2016), 66 էջ:
3. Սարգսյան Տ.Ա. *«Սերվիսի աշխարհագրություն» դասընթացի ուսումնական պրակտիկայի և գործնական պարապմունքների կազմակերպման մեթոդական ուղեցույց*: Եր., ԵՊՀ հրատ. (2014), 72 էջ:

Т. А. САРГСЯН, Л. Р. АКОПЯН, И. В. СААКЯН, Н. А. ОГАНЕСЯН

ДИСТАНЦИОННЫЙ КОМПОНЕНТ УЧЕБНОЙ ПРАКТИКИ СПЕЦИАЛИЗАЦИИ “СЕРВИС” ЕГУ И ЕГО ОРГАНИЗАЦИЯ

Резюме

В работе предпринята попытка системного анализа организационных, технических, содержательно-методических аспектов дистанционного компонента учебной практики специальности “Сервис”. Представлены основные цели, направления, процесс организации и подходы подытоживания дистанционной практики. Особое внимание уделяется включению и возможной роли дистанционного компонента как вспомогательного “инструмента” в рамках учебной практики.

T. A. SARGSYAN, L. R. HAKOBYAN, I. V. SAHAKYAN, N. A. HOVHANNISYAN

DISTANT COMPONENT OF YSU “SERVICE” SPECIALIZATION PRACTICE AND ITS ORGANIZATION

Summary

The work attempts to analyze the organizational, technical, content-methodological aspects of distant component of “Service” specialty educational practice in a systematic manner. The main goals, directions, implementation process and summarizing approaches of the distant learning practice are presented. Particular attention is paid to the inclusion and possible role of the distant component as an auxiliary “tool” or medium in existing learning practice.